ԳԵՈՔԱՐՏ ՍՊԸ
Ք. ՎԱՆԱՁՈՐ
ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՍՑԵ
ՏԱՎՐՈՍ 13Փ 4Ա
ԳՈՐԾԱՐՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵ
ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Փ 5/3-2

ООО ГЕОКАРТ
Г. ВАНАДЗОР
АДРЕС РЕГИСТРАЦИОННЫЙ
УЛ.ТАВРОСА 13 4А
АДРЕС ОФФИСА
УЛ. НАЛБАНДЯН 5/3-2

ԼԻՑԵՆԶԻԱ ЛИЦЕНЗИЯ
ՔՊԼ-001672

ԼՄԱՀ-ՀՄԱԾՔ-24/43

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ
П Р О Е К Т

Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի լճերի այգու վերակառուցման աշխատանքների նախագիծ

Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ա Յ Ի Ն
Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

ԼԻՑԵՆԶԻԱ ՔՊԼ-001672

ԼՄԱՀ-ՀՄԱԾԲ-24/43

Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի լճերի այգու վերակառուցման աշխատանքների նախագիծ

ՏՆՕՐԵՆ՝ Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ

ՎԱՆԱՁՈՐ 2025

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-001672, 2-րդ դաս

(սերիան, համարը, դասը)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ՝ ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ

(քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակը)

ՏՐՎԱԾ Է

2024-10-30, «ԳԵՈՔԱՐՏ» ՍՊԸ

(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը,

ՀՀ, ԼՈՌԻ, ՎԱՆԱՁՈՐ, ՎԱՆԱՁՈՐ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Փ., 5/3-2

գտնվելու վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնակատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ 30.10.2029թ.

(օրը, ամիսը, տարեթիվը)

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UG63-8A51-585D-F377**

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ

ՔՊՆ-001672-05

(ներդիրի սերիան, համարը)

«ԳԵՈՔԱՐՏ» ՍՊԸ

(լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը)

ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ (ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ, ԷԼԵԿՏՐԱԼՈՒՍԱՎՈՐՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԵՐ, ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ, ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԵՎ ՀՈՂՄԱԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱՅԱՆՆԵՐ)

(քաղաքաշինության բնագավառում գործունեության ենթատեսակը)

18.11.2024թ.

(ներդիրը տալու օրը, ամիսը, տարեթիվը)

Գործողության ժամկետը՝ 30.10.2029թ.

(օրը, ամիսը, տարեթիվը)

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UG77-8E6E-1BFB-4779**

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

Պատասխանատու մասնագետի/ների անձնագրային տվյալներ	հավաստագրի սերիա	հավաստագրի համար	ստանալու օր, ամիս, տարեթիվ
ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ	Հ	002995	2024-10-04

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ UG77-8E6E-1BFB-4779
Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ

ՔՊՆ-001672-08

(ներդիրի սերիան, համարը)

«ԳԵՈՔԱՐՏ» ՍՊԸ

(լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը)

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ (ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԵՐ, ՀԻԴՐՈՄԵԼՈՐԱՑԻԱ)

(քաղաքաշինության բնագավառում գործունեության ենթատեսակը)

19.11.2024թ.

(ներդիրը տալու օրը, ամիսը, տարեթիվը)

Գործողության ժամկետը՝ 30.10.2029թ.

(օրը, ամիսը, տարեթիվը)

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UGFF-E294-B3AE-5692**

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

Պատասխանատու մասնագետի/ների անձնագրային տվյալներ	հավաստագրի սերիա	հավաստագրի համար	ստանալու օր, ամիս, տարեթիվ
ՀԱՅԿ ԴԱՎԹՅԱՆ	Հ	002522	2024-09-20

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UGFF-E294-B3AE-5692**
Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

ՌԻԳ ՍՊԸ

Պետ. լիցենզիա N ՔՊԼ-001424

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ Լոռու մարզի, Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի լճերի այգու տարածքում գտնվող բետոնե սնկաձև շինության տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության վերաբերյալ:

Վանաձոր 2025թ.

24.02.2025թ.

N ԼՄԱՀ-ԳՀԾՁԲ- 25/7

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզի, Ալավերդի համայնքի, Ալավերդի քաղաքի լճերի այգու տարածքում գտնվող բետոնե սնկաձև շինության տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության վերաբերյալ հետազոտությունը կատարվել է Ալավերդու համայնքապետարանի հետ՝ առ 20.02.2025թ. N ԼՄԱՀ-ԳՀԾՁԲ- 25/7 կնքված պայմանագրի հիման վրա:

Եզրակացություն տալու նպատակով «ՌԻԳ» ՍՊԸ-ի կողմից (Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության Պետ. լիցենզիա N ՔՊԼ-001424) կատարվել է Ալավերդի քաղաքի լճերի այգու տարածքում գտնվող բետոնե սնկաձև շինության դիտողագործիքային հետազննություն և չափագրման ու լուսանկարման աշխատանքներ:

Շինության կոնստրուկտիվ լուծումների պարզաբանման, և տեխնիկական վիճակի գնահատման նպատակով հետազննվել են շինությունների երկաթբետոնե (ե/բ) կոնստրուկցիաները, ծածկի ե/բ սալերը և այլ կոնստրուկտիվ տարրեր: Ուսումնասիրվել են կոնստրուկտիվ տարրերի վնասվածքների, ճաքերի, ձևախախտումների առկայությունը և դրանց տրվել են որակական ու քանակական գնահատականներ: Որոշվել են կոնստրուկտիվ տարրերի վնասվածության բնույթն ու աստիճանը: Շենքի կոնստրուկտիվ տարրերի վնասվածքների, ճաքերի, ձևախախտումների, թերությունների տեսքերը ֆիքսվել են լուսանկարներով, որոնցից առավել բնութագրականները համապատասխան մեկնաբանություններով բերվում են սույն եզրակացությունում:

Շենքի ծավալահատակագծային լուծումները

Վերոհիշյալ շինությունը իրենից ներկայացնում է, R 3.0 մ շառավիղով՝ ե/բ սյուների վրա տեղադրված, կոնաձև, ե/բ միաձույլ սալից բաղկացած հուշարձան: Շինությունը ճարտարապետական տեսք է հաղորդում լճերի այգի բնակավայրին:

Շինության կոնստրուկտիվ համակարգի լուծումը տրված է շրջանագծով տեղադրված ե/բ թվով 6 հատ սյուներով, որոնց վրա տեղադրված է ե/բ 15 սմ հաստությամբ ե/բ միաձույլ սալ: Հիմքերը կետային են, իրականացվել ե/բ սյունակալներով:

Շենքի տեխնիկական վիճակի հետազննության արդյունքները և գնահատականը

Համաձայն տարբեր կոնստրուկտիվ լուծումներով բնակելի, հասարակական, արտադրական, տրանսպորտային, հիդրոտեխնոլոգիական շինությունների, շենքի ակնադիտական հետազննության արդյունքում պարզվել է, որ շինության կոնստրուկտիվ տարրերում կան արտաքին գործոններից առաջացած որոշակի վնասվածքներ:

Ե/բ ծածկի սալում առկա են բետոնի քայքայված և վնասված տեղամասեր: Քայքայվել է նաև շինության հարդարանքը:

Շենքի երկաթբետոնե կոնստրուկցիաների բետոնի փաստացի ամրությունը որոշվել է չքայքայող եղանակով՝ «RGK SK-60» սկլերոչափի միջոցով: Այս աշխատանքն իրականացվել է «Բետոններ. Ամրության որոշում չքայքայող մեխանիկական մեթոդով» ՀՀ ազգային ստանդարտի պահանջներին համապատասխան (ԳOUS 22690-80):

Նկ. 1



Նկ. 2

Նկ. 3



Նկ. 4

Նկ. 5

Նկ. 6

Եզրահանգումներ

Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազոտման մեթոդական ցուցումների» ՀՀ Լոռու մարզի, Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի լճերի այգու տարածքում գտնվող բետոնե սնկաձև շինության տեխնիկական վիճակը գնահատվում է 2-րդ աստիճանի, այն է՝ կրող կոնստրուկտիվ տարրերի չափավոր վնասվածքներ, այն է՝ կոնստրուկտիվ տարրերն ընդհանրապես պիտանի են շահագործման համար, սակայն պահանջում են որոշ կապիտալ նորոգում, որն ամենաանհրաժեշտն է տվյալ պահին:

Համաձայն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 23.10.2014թ. թիվ 957-Ա հրամանով հաստատված «Շենքերի և շինությունների սեյսմիկ խոցելիության մակարդակի (աստիճանի) գնահատման մեթոդական ցուցումների»՝ շենքի սեյսմիկ խոցելիության աստիճանը (շենքի վարքը երկրաշարժի դեպքում) գնահատվում է միջին, այն է՝ օբյեկտի տարածքում մինչև 8 բալ ըստ MSK-64 սանդղակի (շենքը գտնվում է սեյսմիկ 3-րդ գոտում, գետնի սպասվելիք առավելագույն արագացումը a_{max}=0.5g) հնարավոր երկրաշարժի ժամանակ շենքի 3-րդ համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր») նորմերի 24 աղյուսակի:

Ելնելով շենքի ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումների առանձնահատկություններից, փաստացի տեխնիկական վիճակից, շահագործման ժամկետից, առաջարկվում է շենքի «Սեյսմազինվածության մասնակի բարձրացում» :

Վերականգնել բոլոր այն երկաթբետոնե կոնստրուկցիաներն ու նրանց հանգույցները, որոնցում առկա են տարբեր աստիճանի վնասվածքներ (ամրանների բետոնե պաշտպանիչ շերտի քայքայում, ամրանների մերկացում ու կոռոզիա, և այլն): Իրականացնել հարդարման աշխատանքներ: Եթե շենքի շինարարական աշխատանքներն իրականացնելու ընթացքում բացահայտվի լրացուցիչ միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտություն, որոնք ներկայացված չեն սույն եզրակացությունում, ապա դրանք պետք է լուծվեն աշխատանքային կարգով, նախագծում կատարելով համապատասխան լրացումներ կամ փոփոխություններ:

«ՈՒԳ» ՍՊԸ-ի տնօրեն՝ *Գ. Հարությունյան*

Ինժեներ-շինարար՝ *Ա. Զալյան*

Կատարող մասնագետ՝ *Ա. Ծատուրյան*

«ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՏԻՏԻԶՅԱՆՆԵՐ» ՍՊԸ

ԻՆԺԵՆԵՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ

ԼՃԵՐԻ ԱՅԳՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Լիցենզիա ՔՊԼ 000804, 1-ին դաս

Տնօրեն՝ **Հ. Տիտիզյան**

Երևան 2025թ

Բացատրական մաս

Համաձայն ***« ԳԵՈՔԱՐՏ » ՍՊԸ-ի*** հետ կնքված պայմանագրի և համապատասխան առաջադրանքի 2025 թվականի հունվար ամսին կատարվել են ինժեներա-երկրաբանական ուսումնասիրություններ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի լճերի այգու վերակառուցման աշխատանքների համար: Աշխատանքների իրականացման նպատակն է համաձայն Հայաստանի Հանրապետության նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի ուսումնասիրություններ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի լճերի այգու վերակառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման համար անհրաժեշտ երկրաբանական տվյալների հավաքագրումը և համապատասխան հաշվետվության կազմումը: Վերը շարադրված խնդիրը լիարժեք լուծելու նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները. ուսումնասիրվել է տվյալ տարածքի երկրաբանական կառուցվածքը առկա մերկացումների տվյալների, տեղազննության, ակնադիտարկման եղանակով, ինչպես նաև հարակից տարածքներում մեր կողմից կատարված ինժեներաերկրաբանական հետազոտումների տվյալների համադրմամբ և վերլուծությամբ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գեոմորֆոլոգիական տեսակետից Հետազոտվող տարածքը գտնվում է Հայաստանի Հանրապետությանի Լոռու մարզի Ալավերդի համայնքում: Ունի լեռնային տեղանք, որը ներկայացված է անտառապատ և ժայռակերտ լեռներով, սարահարթերով, խորը ձորերով, որտեղով հոսում է Դեբեդ գետը: Ծովի մակերևույթից 1000 մ բարձրության վրա:

Գեոմորֆոլոգիական տեսակետից Ուսումնասիրվող տարածքի երկրաբանական կտրվածքում մասնակցում են նեոգեն ժամանակաշրջանի և Չորորդականի հասակի լավաները, որոնք հիմնականում ծածկված են ստորին չորորդականի և պալեոգենի հասակի լճային, լճա-ալյուվիալ և հրաբխային գոյացումներով՝ներկայացված մանրախճային և ճալաքարա-կոպճային նստվածքներով:

Կլիմա Ուսումնասիրվող գոտին համաձայն ՀՀՇՆ 22.01.24 «Շինարարական կլիմայաբանություն» գտնվում է բարեխառն չափավոր խոնավ կլիմայական գոտում: Բացակայում են «զգալի սառնամանիքներով» և «սառնամանիքներով» եղանակները:Ստորև ներկայացվում է շրջանի կլիմայական ցուցանիշները աղյուսակների տեսքով՝

- Տարեկան միջին ջերմաստիճանը 6.9 °C
- Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը 37°C
- Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -31°C
- Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը 73%
- Օդի հարաբերական խոնավությունը ամենացուրտ ամսվա 56%
- Օդի հարաբերական խոնավությունը ամենաշոգ ամսվա 58%
- Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 600-700մմ:

- Քամու միջին տարեկան արագությունը 1.8մ/վ:
- Բնահողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 70սմ:



Նկ. 3 Կլիմայական շրջանացման սխեմատիկ քարտեզ

<u>Հիդրոերկրաբանական տեսակետից</u> Ուսումնասիրվող տարածքի ինժեներա-երկրաբանական պայմանների, մասամբ լանջային-գրավիտացիոն պրոցեսների զարգացման վրա ազդող կարևոր գործոններից են հանդիսանում ստորգետնյա ջրերը, որոնց ձևավավորումն ու բնույթը, իրենց հերթին ուղղակիորեն կախված է տարածքի ֆիզիկա-աշխարհագրական պայմաններից և երկրաբանա-լիթոլոգիական առանձնահատկություններից: Հետազոտվող տարածքը կարելի է գնահատել, որպես գրունտային ջրերի սնման, կուտակման և բեռնաթափման շրջան: ՈՒսումնասիրվող տարածքում գրունտային ջրերը ըստ ֆոնդային տվյալների գտնվում են 4.0մ խորը հորիզոններում:

<u>Ֆիզիկաերկրաբանական</u> վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում բացակայում են:

Շրջանի սեյսմիկ պայմանները

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի, տեղազննվող շրջանը գտնվում է I սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.3g արագացմամբ:

ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզ


ՍԵՅՄԻԿ ԳՈՏԻՆԵՐ
Գետնի սպասվելիք արագացումների A
(ազատ անկման g արագացման մասերով)
մեծություններով
1 A=0,3g
2 A=0,4g
3 A=0,5g

Տարածքի երկրաբանական կառուցվածքը

Ուսումնասիրվող տարածքի երկրաբանական կտրվածքը ուսումնասիրվել է ակնադիտական եղանակով, ինչպես նաև օգտագործվել է տվյալ տարածքին հարակից տարածքներում մեր կողմից կատարված աշխատանքների ֆոնդային տվյալները: Ուսումնասիրվող տարածքում առանձնացվել է գրունտների երեք շերտ: Ստորև բերվում է այդ շերտի լիթոլոգիական նկարագրությունը և նրա ֆիզիկա-մեխանիկական հատկությունները

Շերտ 1 Բուսահող ավազակավի, կավավազի լցոնումով: Շերտի հզորությունը 0.0-0.20մ է: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն (9ա) I կարգ:

Շերտ 2 Տարբեր ապարների մանրախճային նստվածքներ ավազակավի լցոնով 15-20%, տեղ-տեղ բեկորների պարունակությամբ: Ժամանակակից դելյուվիալ-պրոլյուվիալ նստվածքներ են: Շերտի հզորությունը 0.20-1.20մ Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն (13) IV կարգ :

Շերտ 3 Ալյուվիալ ծագման լավ գնդավորված ճալաքարա-կոպճային նստվածքներ, 7-10% գլաքարով և մոտ 15% խճավազի լցանյութով: Բեկորային նյութը տարակազմ է, լավ և միջին հղկվածության: Շերտի հզորությունը 1.20-2.00մ Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն (6գ) IV կարգ

Աղյուսակ 1

Հատկանիշի անվանումը		Գրունտի անվանումը և շերտի համարը
		1
Գրունտների անվանումները		Տարբեր ապարների մանրախճային նստվածքներ
Ծավալային Խտությունը գ/սմ³	ρ	1.80
Տեսակարար խտությունը գ/սմ³	ρ	2.61
Ծակոտկենության գործակից	e	0,461
Ծակոտկենության գործակից	n	32.60
Ձևախախտման մոդուլը, ՄՊա	E	43.0
Գրունտի հաշվարկային դիմադրությունը կգ/սմ²	R_0	3.0
Գրունտի կարգը	աղ.	IV (13)
Գրունտների կարգը ըստ սեյսմիկ հատկանիշերի ՀՀ ՇՆ 20.04.2020		II

Աղյուսակ 1.1

Հատկանիշի անվանումը		Գրունտի անվանումը և շերտի համարը
		1
Գրունտների անվանումները		Ալյուվիալ ծագման լավ գնդավորված ճալաքարա-կոպճային նստվածքներ
Ծավալային Խտությունը գ/սմ³	ρ	1.98
Տեսակարար խտությունը գ/սմ³	ρ	2.87
Ծակոտկենության գործակից	e	0,484
Ծակոտկենության գործակից	n	32.60
Ձևախախտման մոդուլը, ՄՊա	E	42.0
Գրունտի հաշվարկային դիմադրությունը կգ/սմ²	R_0	3.5
Գրունտի կարգը	աղ.	IV (6ᵍ)
Գրունտների կարգը ըստ սեյսմիկ հատկանիշերի ՀՀ ՇՆ 20.04.2020		II

Օ Գ Տ Ա Գ Ո Ր Դ Վ Ա Ծ Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն Ց Ա Ն Կ

1 ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն
ՀՀՇՆ 1-2.01-99 Ինժեներական հետազննություններ շինարարության համար
2. ՀՀ կառավարության որոշում N 1530-Ն առ 04.09.2003 թ. Ինժեներաերկրաբանական հետազննությունների նյութերի փորձաքննության Կարգը
3. ՀՀՇՆ 20.04.2020 Երկրաշարժադիմացկուն շինարարություն
4. ԳOUS 32868-2014 Ինժեներական և երկրաբանական հետազոտությունների պահանջներ
5. ԳOUS 33063-2014 Տեղանքի և բնահողի տեսակների դասակարգում
6. ԳOUS 5180-2015 Բնահողեր. Ֆիզիկական բնութագրերի լաբորատոր որոշման մեթոդներ.
7. ԳOUS 25100-2020 Բնահողեր. Դասակարգում։

ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի լճերի այգու վերակառուցման աշխատանքների ինժիներաերկրաբանական ուսումնասիրությունների հաշվետվության եզրակացություն:

Կատարված հետազոտությունների և դրանց արդյունքների վերլուծությունը բերել են հետևյալ եզրակացության.

- Տեղամասի երկրաբանական ներկայացված է գրունտների 3 շերտերով, որոնք ունեն բավարար ֆիզիկամեխանիկական ցուցանիշներ, որոնք բերված են 1 և 1.1 աղյուսակում:
- Տեղամասում գրունտային ջրերը ըստ ֆոնդային տվյալների գտնվում են 4.0 մ խորը հորիզոններում:
- Ուսումնասիրվող տեղամասում գրունտները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար, որպես հիմնատակ խորհուրդ է տրվում.
    - Շերտ 2 /տարբեր ապարների մանրախճային նստվածքներ /, որոնց սեյսմիկ հատկությունը ըստ ՀՀՇՆ -20.04.2020թ.-ի 2-րդ կարգ է:
    - ✓ Դիմադրությունը R=3.0 կգ/սմ^2
    - Շերտ 3 / Ալյուիվալ ծագման լավ գնդավորված ճալաքարա-կոպճային նստվածքներ /, որոնց սեյսմիկ հատկությունը ըստ ՀՀՇՆ -20.04.2020թ.-ի 2-րդ կարգ է:
    - ✓ Դիմադրությունը R=3.5 կգ/սմ^2
- Համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի ուսումնասիրվող տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝ Amax=0,3g:
- Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ 22.01.24 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 0.7մ:
- Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ բացակայում են:
- Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Երկրաբան՝ **Հ. Տիտիզյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000804, 1-ին դաս

(սերիան, համարը, դասը)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ ԵՎ ՀԵՏԱՁՆՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ

(քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակը)

ՏՐՎԱԾ Է

2024-09-13, «ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՏԻՏԻՉՅԱՆՆԵՐ» ՍՊԸ

(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը,

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ԱՎԱՆ, ԱՎԱՆ,ԲՐՅՈՒՍՈՎ, 62 Շ., 31 ԲՆ.

գտնվելու վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնակատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ 13.09.2029թ.

(օրը, ամիսը, տարեթիվը)

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UG3D-B197-32E6-5B48**

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի լճերի այգու վերակառուցման աշխատանքների նախագիծ

Ընդհանուր տվյալներ

ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի լճերի այգու վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման ճարտարապետաշինարարական և ինժեներական մասը կազմված է Պատվիրատուի՝ Ալավերդու համայնքապետարանի և ԼՄԱՀ-ՀՄԱԾԲ-24/43 պայմանագրի և մասնավորապես նրա անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական բնութագրի պահանջների, Պատվիրատուի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի, կադաստրային վկայականի, «ՌԻԳ» ՍՊԸ-ի կողմից տրված տեխնիկական վիճակի եզրակացության և ՀՀ գործող շինարարական նորմերի և ստանդարտների համաձայն:

Երկրաբանական-մթնոլորտային տվյալներ

1. *Ջերմաստիճանի բացարձակ մաքսիմումը — +37°C*
2. *Ջերմաստիճանի բացարձակ մինիմումը — -31°C*
3. *Ձյան նորմատիվ բեռնվածքը — 70 կգ/մ²*
4. *Սեյսմիկ գոտին — I գոտի*
5. *Սառեցման խորությունը — 70սմ*

Բացատրագիր
Ճարտարապետաշինարարական մաս

Նախագծով նախատեսված է հետևյալ հիմնական աշխատանքների կատարումը.

- *Ծածկույթի իրականացում բետոնե սալիկներից (ճեմուղիներ)*
- *Ջրավազանի վերանորոգում*
- *Խաղահրապարակի վերանորոգում*
- *Ծառերի և դեկորատիվ թփերի նախապատրաստում և տնկում*
- *Փայտե նստարանների և աղբարկղների տեղադրում*
- *Արտաքին լուսավորության ցանցի կառուցում*
- *Թեքահարթակների կառուցում*
- *աստիճանահարթակների կառուցում*

Նախագիծը իրականացվել է ՀՀ-ում գործող նորմերի և կանոնների՝

ՀՀՇՆ 30-01-2023 <<Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում>>, ՀՀՇՆ 20.04-2020 <<Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր>>, ՀՀՇՆ 13-03-2022 <<Կրող և պատող կոնստրուկցիաներ >>, ՀՀՇՆ 22-01-2024 <<Շինարարական կլիմայաբանություն>>, ՀՀՇՆ 31-042022 <<Տանիքներ և տանիքածածկեր>>, ՀՀՇՆ 31-04.05-2023 <<Հատակներ>>, ՀՀՇՆ 40-01.02 <<Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ>>, ՀՀՇՆ40-01.03-2022<<Կոյուղի. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ>>, ՀՀՇՆ 22-03-2017 <<Արհեստական և բնական Լուսավորում>>, ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն», ՀՀՇՆ 13-02-2022 <<Անվտանգության տեխնիկական շինարարությունում>> և ՀՀՇՆ 30-02-2022<<Տարածքի բարեկարգում>> շինարարական նորմերին և 2020 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքներում (այդ թվում բնակավայրերում) ոչ տարանցիկ, տեղական նշանակության ավտոմոբիլային և ներհամայնքային ճանապարհների ու փողոցների երթևեկելի մասի և մայթերի սալարկման, խճապատման և բարեկարգման աշխատանքների կատարման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» N105-Ն հրամանին համաձայն:

Տեղագրական հանույթը կատարվել է *ARM WGS կոորդինատային համակարգում գործող GPS համակարգերի միջոցով: Հոծ հորիզոնականներն անցկացված են 0.5մ քայլով, կոորդինատային և բարձունքային համակարգ՝ ARM WGS :*

Գլխավոր հատակագծում *անցուղիների, նստարանների, աղբամանների և կանաչապատ գոտիների տեղադիրքը և դասավորվածությունը, նրանց ծավալատարածական հորինվածքը ընտրվել է հաշվի առնելով պատվիրատուի հետ նախապես մշակված էսքիզը, տեղանքի թեքությունը, մոտեցման ճանապարհի, մատակարարող ենթակառուցվածքների նկատմամբ հարմարությունը, լուսավորության նկատառումները:*

Շինարարության կազմակերպում

1. Ընդհանուր տեղեկություններ

Շինարարության կազմակերպման նախագծի հիմքում ընկած են մրցութային մաս կազմող "Գծագրերը", տարածքի և նրա շրջակայքի ուսումնասիրությունները:

Կապալառուն, մրցութային հայտի նախահաշվի միավոր գները և ընդհանուր արժեքը որոշելիս, պետք է հաշվի առնի նաև շինարարության կազմակերպման հետ կապված լրացուցիչ ծախսերը:

Շինարարության տևողությունը որոշված է գործող նորմատիվային փաստաթղթերով, բայց կարող է ճշտվել Պատվիրատուի հետ:

Կապալառուն պետք է օգտագործի շինարարության իրականացման ժամանակ այն նյութերը, որոնք նշված են նախագծում և տեղադրի այն սարքավորումները, որոնք տրված են նախագծով: Կապալառուն կարող է առաջարկել այլընտրանքային նյութեր պայմանով, որ այդ նյութերի որակը համապատասխանի (կամ լինի ավելի բարձր) նախագծով տրվածներին: Այդ նյութերի կիրառումը պետք է համաձայնեցվի Պատվիրատուի և նախագծի գլխավոր ճարտարագետի հետ: Սարքավորումները ձեռք բերելուց առաջ, Կապալառուն դրանց ցանկը պետք է համաձայնեցնի Պատվիրատուի հետ և ներկայացնի համապատասխան սերտիֆիկատները:

Կապալառուն պարտավոր է օբյեկտը շահագործման հանձնելուց առաջ անցկացնել համապատասխան մոնիթորինգ և սրուգում՝ Պատվիրատուի և նախագծի գլխավոր ճարտարագետի հետ համատեղ՝ համոզվելու համար կատարված աշխատանքների համապատասխանությանը նախագծային չափանիշների հետ:

2. Հիմնական աշխատանքների իրականացում

Շինարարական աշխատանքները իրականացնելիս անհրաժեշտ է ղեկավարվել հետևյալ դրույթներով (բայց չսահմանափակվել այդքանով).

Նախապատրաստական շրջանում՝

- *կատարել բոլոր այն աշխատանքները, որոնք կապված են շինարարությանը խանգարող առկա ինժեներական կոմունիկացիաների ժամանակավորապես կամ մշտական տեղափոխման հետ,*
- *համաձայնեցնել շինհրապարակի շուրջ գտնվող հիմնարկությունների ղեկավարների և բնակելի փների բնակիչների հետ ինժեներական կոմունիկացիաների անջատման ժամանակը և աշխատանքի կատարման եղանակները, որպեսզի քաղաքացիներին հասցրած անհարմարությունները լինեն փոքրագույն:*
- *շինարարական աղբի հեռացումը կատարել արկղանման բաքերով, փոշին քչացնելու նպատակով՝ շուրջը ջրելով,*
- *շինարարական աղբը տեղափոխել տեղական իշխանությունների հետ համաձայնեցված տեղամաս:*

Մասնավորապես Կապալառուն պարտավոր է.

- *շինհրապարակի, շինարարական տեղամասերի, բանվորական տեղերի, տրանսպորտային միջոցների ու շինարարական մեքենաների երթևեկությունը, մարդկանց անցատեղը կազմակերպելիս, ճշտել մարդկանց համար վտանգավոր գոտիները, որտեղ մշտապես առկա են կամ կարող են լինել*

վտանգավոր արտադրական գործոններ:

- մշտապես առկա վտանգավոր արտադրական գործոնների գոտիներում կողմնակի մարդկանց մուտքը կանխելու նպատակով պետք է տեղադրվի շրջափակիչներ (վտանգազերծող):

Բանվորական այն տեղամասերը, որտեղ կիրառվում է կամ պատրաստվում է սոսինձ, մածիկ, ներկեր և այլ նյութեր, որոնք անջատում են պայթունավտանգ կամ թունավոր նյութեր, չի թույլատրվում իրականացնել կրակի կիրառմամբ աշխատանքներ կամ կայծ առաջացնող գործողություններ:
Այդպիսի գոտիներում էլեկտրասարքավորումները պետք է կատարված լինեն պայթունաանվտանգ եղանակով: Բացի այդ, պետք է ձեռնարկվի միջոցառումներ, որոնք կկանխեն սպատիկ էլեկտրական լիցքերի առաջացումը և կուտակումը:

3. Շինարարության տևողությունը

Շինարարական աշխատանքների ընդհանուր նորմատիվային տևողությունը որոշվում է հաշվարկով և կազմում է **վեց** ամիս:
Այն կարող է ճշտվել Պատվիրատուի կողմից՝ Կապալառուի հետ պայմանագիր կնքելիս, հիմք ընդունելով Հայաստանի շուկայում ձևավորված նման ծրագրի իրականացման իրատեսական ժամկետները:
Շինարարության նախապատրաստական ժամկետը նախատեսված է մեկ շաբաթ:
Շինարարության ժամանակացույցը կրված է ներքևի աղյուսակով:

4. Շրջակա միջավայրի պահպանություն

Շինարարության ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանը որոշելու և մեղմացնող միջոցառումներ կիրառելու նպատակով իրականացվել է ուղղակի պարզ հետազոտություն:
Շինարարության և վերակառուցման ժամանակ շրջակա միջավայրի ազդեցության հիմնական ռիսկերը հետևյալն են.

- ճանապարհից, շին հրապարակից և բեռնատար ավտոմեքենաներից բարձրացող փոշի,
- շին. հրապարակում օգտագործված ջուր,
- թափոնների վերացում,
- նյութերի օգտագործում և տեղափոխում, որոնք վնաս են առողջությանը (կապար պարունակող ներկեր, ասբեստ պարունակող նյութեր և այլն),
- շին աղբի տեղափոխում,
- հողային աշխատանքներ,

Կապալառուի կողմից կատարվող աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցության մեղմացման և մոնիտորինգի պարտականությունները փվյալ շին հրապարակում դրվում է տեխնիկական հսկիչի վրա:
Իրականացվող շինարարական աշխատանքները պետք է համապատասխանեն Հայաստանում գործող շրջակա միջավայրի մասին կանոններին:

5. Մրցույթի հավակնորդի առաջնահերթ խնդիրները

Մրցույթի հավակնորդը մինչև մրցութային առաջադրանքի կատարման գնի համար առաջարկություն ներկայացնելը պարտավոր է՝

- Մանրակրկիտ ձևով ծանոթանալ նախագծային փաստաթղթերին, նրանցով նախատեսվող աշխատանքների ցանկին և ծավալներին, տեխնիկական մասնագրերին, մրցութային փաթեթի ողջ բովանդակությանը:
- Ճշտել կառույցի գտնվելու վայրը և տեղում խորապես ուսումնասիրել պահանջվող աշխատանքների ծավալները, նրանց կատարման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացման ռեալ հնարավորությունները սեփական կամ ներգրավվելիք ուժերով, ելնելով արտադրական հզորություններից և առաջադրանքի կատարման ժամկետից:
- Պարզել, աշխատանքները կատարելու տեսակետից, տեղի առանձնահատկությունները, հնարավոր դժվարությունները, որոնց առկայությունը կարող է անդրադառնալ աշխատանքների կատարման ժամկետների և գնի վրա:
- Պարզել շինարարական օբյեկտներին մոտենալու, շինհրապարակի կազմակերպելու հնարավորությունները, պահեստային տնտեսության և այլ անհրաժեշտությունների համար գոյություն ունեցող շինությունների օգտագործման հնարավորությունները, ջրամատակարարման և էլեկտրամատակարարման աղբյուրները:
- Պարզել ժամանակավոր կառույցների անհրաժեշտության ցանկը, այդ թվում ճանապարհներ, էլեկտրահաղորդագծեր, ջրագծեր, կենցաղային պայմանների համար շինություններ և այլն:
- Հաշվի առնել, որ մրցութային աշխատանքների գնի մեջ մտնում է նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարումները, ինչպես նաև ապահովագրական վճարումները:
- Վերը նշված ուսումնասիրությունների և նրանց վերլուծությունների արդյունքում առաջացած լրացուցիչ ծախսերը հաշվի առնել մրցութային հայտի նախահաշվի միավոր գները և ընդհանուր արժեքը որոշելիս:

6. Շինհրապարակի էլեկտրամատակարարումը և ջրամատակարարումը

Կապալառուն պարտավոր է ապահովել իր միջոցներով շինհրապարակի ջրամատակարարումը և էլեկտրամատակարարումը, կազմակերպել շինհրապարակի և կառույցների լուսավորումը:
Խմելու ջուրը պետք է համապատասխանի սահմանված սանիտարական նորմերին: Նրա սակավության դեպքում, տեխնոլոգիական կարիքների համար լաբորատոր համապատասխան սպուգումներից հետո կարող են օգտագործվել նաև շինհրապարակի մոտակա այլ ջրեր (սպորգետնյա, գետի, ավազանի և այլն) ժամանակավոր ջրատարների կառուցմամբ:

7. Շինհրապարակի նախապատրաստում

Կապալառուի պարտականությունների մեջ է մտնում, Պատվիրատուի կողմից համաձայնեցված սահմաններում, շինարարության համար հատկացված տարածքի մաքրումը արմատներից, կենցաղային աղբից և այլ նյութերից:
Պատվիրատուն իրավունք ունի անարգել մուտք գործել ցանկացած ժամանակավոր կառույց և անհրաժեշտության դեպքում կատարել սպուգումներ:
Ժամանակավոր կառույցների շահագործումից և շինարարության ավարտից հետո, Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին անհապաղորեն վերացնել ցանկացած ժամանակավոր կառույց (կամ բոլոր ժամանակավոր կառույցները) Պատվիրատուի պահանջով:

8. Կլիմայական գործոնը

Իրականացվող շինարարական աշխատանքների վրա մթնոլորտային ազդեցությունները բացառելու նպատակով Կապալառուն պարտավոր է շինհրապարակում պատշաճ մակարդակով կազմակերպել մակերևույթային ջրերի հեռացում:
Կապալառուն պետք է կազմակերպի աշխատանքները այնպիսի հերթականությամբ և ժամկետներում, որպեսզի հնարավոր չափով բացառվի մթնոլորտային տեղումների (կամ ջերմաստիճանի) հետևանքով կատարված աշխատանքներին հասցված վնասները:
Կլիմայական անբարենպաստ պայմանները հիմք չեն կարող հանդիսանալ ծրագրի իրականացման համար նախատեսված տևողությունը և մրցութային գինը վերանայելու:
Բացառիկ դեպքերում Պատվիրատուն իրավասու է սահմանված կարգով որոշում ընդունել աշխատանքների ժամանակավոր ընդհատման մասին, կապված աշխատանքների անհրաժեշտ որակի ապահովման անհնարինության հետ:

9. Անվտանգության պայմաններ

Կապալառուն պարտավոր է ապահովել շինհրապարակում գտնվող իր աշխատողների համար անհրաժեշտ սանիտարական և հիգիենիկ պայմաններ համաձայն ՀՀ օրենսդրության:
Կապալառուն իր միջոցներով պետք է կառուցի և սարքավորի ժամանակավոր հակահրդեհային կետեր,

ինչպես նաև կազմակերպի հակահրդեհային պաշտպանության ծառայություն:

Կապալառուն տեղական ինքնակառավարման մարմինների համաձայնությամբ իր միջոցներով պետք է իրականացնի ժամանակավոր ցանկապատ, որը պետք է ընդգրկի շինարարական աշխատանքների իրականացման ամբողջ տարածքը: Հասարակական վայրերում գտնվող ցանկապատների տեսքը պետք է համաձայնեցվի տեղական մարմինների հետ: Այն պետք է բացառի այլ անձանց մուտքը շինհրապարակ:

Շինարարության ամբողջ ժամանակամիջոցում, մեկնարկի օրվանից մինչև նախնական ակտի ստորագրումը, Կապալառուն պատասխանատու է իրականացված աշխատանքների, շինարարական նյութերի, սարքերի ու սարքավորումների և այլ արժեքների պահպանության համար: Շինարարության նշված ժամանակամիջոցում տարբեր պատճառներով նրա կրած վնասը ծածկվում է սեփական միջոցների հաշվին, բացառությամբ պայմանագրով նախատեսված դեպքերի:

10. Օգտագործվող նյութերը և սարքերը

Շինարարության ընթացքում օգտագործվող բոլոր նյութերը և սարքերը պետք է համապատասխանեն ՀՀ տարածքում գործող նորմերին և ստանդարտներին և ապահովեն աշխատանքների բարձր որակ:

Մրցութային հայտի նախահաշվում տվյալ ծրագրում օգտագործվող նյութերի և սարքերի վերաբերյալ գնային առաջարկներ ներկայացնելիս ճիշտ կողմնորոշվելու համար Կապալառուն պետք է նախապես ծանոթանա Տեխնիկական մասնագրերում և ցուցադրական նյութերում ներկայացվածպահանջներին:

Կապալառուին Պատվիրատուն է ներկայացնում տվյալ ծրագրում օգտագործվող նյութերի և սարքերի ցանկ, որոնց նմուշները մինչև օգտագործումը պարտադիր պետք է ներկայացվեն Պատվիրատուին:

Պատվիրատուն, ըստ իր հայեցողության, կարող է պահանջել նաև ցանկում չընդգրկված նյութերի և սարքերի նմուշները և Կապալառուն պարտավոր է դրանք ներկայացնել Պատվիրատուին: Ներկայացվող նյութերի որակը, գույնը և արտաքին տեսքը պետք է համաձայնեցվի Պատվիրատուի և նախագծի հեղինակի հետ:

Նյութերի կամ սարքի վերաբերյալ համաձայնությունը ձևակերպվում է փաստաթղթով, որտեղ նշվում են նրանց բնութագրող բոլոր տվյալները (արտադրողը, չափերը, տեխնիկական հատկանիշներըև այլն):

Եթե առաջարկվող նյութերն ու սարքերը չեն համապատասխանում Տեխնիկական մասնագրերով սահմանված պահանջներին, Պատվիրատուն իրավունք ունի մերժել Կապալառուի առաջարկը: Կապալառուն պարտավոր է ներկայացնել Պատվիրատուին նոր առաջարկներ, մինչև նրանից հավանություն ստանալը:

Կապալառուի կողմից մրցույթային նախահաշվում տվյալ նյութի համար հայտարարած ցածր գինը կամ անտեղյակությունը պահանջներին չի կարող հիմք հանդիսանալ ցածրորակ և Պատվիրատուի կողմից հավանության չարժանացած նյութի օգտագործման համար:

Պատվիրատուին ներկայացված նյութերի ու սարքերի նմուշները պահպանվում են նրա մոտ մինչև համապատասխան աշխատանքների ավարտը և նրանց ընդունումը Պատվիրատուի կողմից: Պատվիրատուն, անհրաժեշտության դեպքում, կարող է պահել նմուշները մինչև ծրագրի ավարտը և նրա ընդունման վերջնական ակտի ստորագրումը:

Հնարավոր թյուրիմացություններից խուսափելու համար պահվող նմուշները Պատվիրատուի և Կապալառուի կողմից հաստատագրվում են երկկողմանի կնքմամբ (ստորագրությամբ, փաթեթավորված թափանցիկ էթիլենային փոպրակում և այլն):

Պատվիրատուն կարող է պահանջել Կապալառուից շինարարության ընթացքում օգտագործվող ցանկացած նյութերի կամ սարքերի փորձարկումներ: Կապալառուն պարտավոր է անվերապահորեն կատարել այդ պահանջները: Պատվիրատուն կարող է նաև, սեփական հայեցողությամբ, ինքնուրույն կատարել նման փորձարկումներ: Այդ դեպքում, Կապալառուն պարտավոր է տրամադրել Պատվիրատուին համապատասխան նմուշները, ինչպես նաև անհրաժեշտ սարքավորումներ, աշխատուժ և այլ պարագաներ ու աջակցել այդ նմուշների փորձարկման իրականացմանը:

Փորձարկման վայրի հեռավորությունը չի ազատում կապալառուին անվերապահորեն կատարելու իր պարտականությունները սեփական միջոցների հաշվին:

Պատվիրատուն իրավունք ունի պահանջել, իսկ Կապալառուն պարտավոր է ստանալ մատակարարից նրա կողմից առաքվող նյութերի և սարքերի փորձարկումների արձանագրությունները ու դրանց պատճենները: Հանրապետության տարածքում կատարվող փորձարկումները պետք է իրականացվենհավատարմագրված կազմակերպություններում, արձանագրությունները համապատասխանեն ՀՀ տարածքում գործող նորմերին:

Շինանյութերի և սարքերի փորձարկումներ անցկացնելու համար հանրապետությունում հավատարմագրված են "Հայսեյսմշին" ԳՀԻ ՓԲԸ, "Ճանշին" ԲԲԸ-ի լաբարատորիան, "Ուկրշին" ԲԲԸ (Վանաձոր), Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության "Հյուսիսային բաժանմունք" (Գյումրի), "Արցախ" ՍՊԸ (Գյումրի) և այլն:

11. Աշխատանքների ընդունումը

Յուրաքանչյուր փուլում իրականացված աշխատանքները Պատվիրատուի կողմից ընդունվում և վճարվում են ըստ փաստացի կատարված ծավալի, Պայմանագրով սահմանված կարգով, բայց ոչ ավել, քան նախատեսված է նախագծով և նախահաշվով: Նախագծում և նախահաշվում չընդգրկված ծավալների և աշխատանքների կատարումը պետք է նախապես գրավոր համաձայնեցվի Պատվիրատուի հետ՝ Պայմանագրում սահմանված կարգով:

Բոլոր այն աշխատանքները, որոնք կատարվել են Կապալառուի կողմից պայմանագրային նախահաշվից և նախագծից դուրս, առանց Պատվիրատուի հետ նախապես գրավոր համաձայնեցման և Պայմանագրի փոփոխման, Պատվիրատուի կողմից չեն ուսումնասիրվի և չեն վճարվի:

Կապալառուն կարող է ներկայացնել պատվիրատուին իրականացված աշխատանքների համար վճարում կատարելու. եթե՝

- վճարման ներկայացվող կատարված աշխատանքների տեսակները և ծավալները լրիվ համապատասխանում են նախագծային փվյալներին,
- այդ աշխատանքները համապատասխանում են երկկողմանի հաստատված գրաֆիկներով նախատեսված վճարման փուլերին,
- կատարված աշխատանքների որակը համապատասխանում է տեխնիկական մասնագրերի պահանջներին. գործող նորմերին,
- համապատասխան փուլի բոլոր թաքնված աշխատանքները ստուգված են պատվիրատուի կողմից և հաստատված են համապատասխան ակտերով:
- առկա են փվյալ փուլում օգտագործված նյութերի և սարքավորումների համար ՀՀ Օրենքով սահմանված և (կամ) Պատվիրատուի պահանջով կատարված բոլոր փորձարկման ակտերը, լաբորատոր հետազոտությունների եզրակացությունները, սերտիֆիկատները, տեխնիկական անձնագրերը:

Նշված պայմանների բավարարման դեպքում կազմվում է համապատասխան փուլի աշխատանքների ընդունման ակտ Պատվիրատուի կողմից սահմանված ձևով:

Եթե Պատվիրատուն հիմնավորված պատճառաբանմամբ մերժում է աշխատանքների ընդունումը, ապա Պատվիրատուի կողմից առաջադրված պահանջները հայտնաբերված թերությունների վերաբերյալ Կապալառուն պարտավոր է անվերապահորեն կատարել, ինչպես նաև հեռացնել շինհրապարակից անորակ և վնասված նյութերն ու կոնստրուկցիաները: Թերությունների վերացման հետ կապված լրացուցիչ ծախսերը կատարվում են Կապալառուի հաշվին:

Անորակ կատարված աշխատանքների ծավալները չեն կարող հանվել նախահաշվից չվճարելու պայմանով, կամ փոխարինել այլ աշխատանքների ծավալներով ու նրանց գներով:

Շինարարության ընթացքում շրջակա միջավայրին հասցված վնասները հատուցվում են Կապալառուի կողմից, իսկ չկատարելու դեպքում Կապալառուն պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ծածկման ենթակա աշխատանքները նախորոք պետք է ներկայացվեն Պատվիրատուին, կամ նրա ներկայացուցչին, դրանց կատարման որակի համար հավանություն ստանալու նպատակով: Պատվիրատուի հավանության դեպքում այդ աշխատանքների որակի ընդունումը ձևակերպվում է

Կապալառուի կողմից կազմված թաքնված աշխատանքների ակտով, երկկողմանի ստորագրությամբ, համաձայն ՀՀ Քաղաքաշինության նախարարության 28.04.98թ. թիվ 4 հրամանի: Ակտը կազմվում է 3 օրինակից, որոնցից 2 օրինակը պատկանում է Պատվիրատուին, իսկ 1 օրինակը՝ Կապալառուին: Կապալառուի կողմից կատարված աշխատանքների փուլերը վճարվում են միայն այդ փուլերում կատարված բոլոր թաքնված աշխատանքների համար սահմանված կարգով կազմված ակտերի առկայության դեպքում:

Ծրագրի կատարման ավարտից հետո, Պատվիրատուի կողմից աշխատանքների ընդունումը իրականացվում է պայմանագրով նախատեսված կարգով:

12. Աշխատանքների երաշխիքը

Կապալառուն պարտավոր է իր հաշվին վերացնել այն թերությունները, որոնք ի հայտ կգան պայմանագրում նշված երաշխիքային ժամկետներում կառույցների շահագործման ընթացքում (աշխատանքների ցանկը և երաշխիքային ժամկետները որոշում է Պատվիրատուն, որոնք զետեղվում են Պայմանագրում):

Երաշխիքային ժամանակամիջոցում հայտնաբերված թերությունների մասին Պատվիրատուի և Կապալառուի կողմից կազմվում է համապատասխան երկկողմանի ակտ, որում նշվում են թերությունները, նրանց չափերն ու ծավալները, վերացման ժամկետները

Աշխատանքների կատարման համար պահանջվող տեխնիկական միջոցներ

հ/հ	*Տեխնիկական միջոցի անվանումը*	*Տիպը*	*Քանակը*
1	*2*	*3*	*4*
1	*Էքսկավատոր*	*Բահի ծավալը 0,30մ³*	*մեկհատ*
2	*Ավտոմոբիլային կռունկ*	*Բեռնատարողություն-16տ Կռունկի երկարություն-17մ*	*մեկհատ*
3	*Ավտոհնքնաթափ*	*Բեռնատարողություն-15տ*	*երկու հատ*
4	*Բետոնախառնիչ*	*Ծավալը-10-12մ³*	*մեկ հատ*
6	*Ջրի մեքենա*	*Յանկացած*	*մեկ հատ*
7	*Ձեռքի գլդոն*	*Յանկացած*	*մեկ հատ*
8	*Գլդոն 2տ-4տ*	*Պնևմատնվավոր*	*մեկ հատ*
9	*Գլդոն 9տ-11տ*	*Պնևմատնվավոր*	*մեկ հատ*
10	*Ավտոգրեյդեր*	*Յանկացած*	*մեկ հատ*

Աշխատանքների կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսներ

հ/հ	*Մասնագիտական որակավորումը*	*Պահանջվող քանակը*	*Ծանոթություն*
1	*2*	*3*	*4*
1	*Ճարտարապետ /աշղեկ/*	*մեկ մասնագետ*	
2	*Բանվորական անձնակազմի քանակի ընտրությունը ըստ անհրաժեշտության*		

Կապալառու կազմակերպությունից շինարարական աշխատանքների իրականացման համար պահանջվող լիցենզիաները ըստ « Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում»հետևյալ ոլորտների՝

Հ/Հ	*Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).*
1	*2*
1	*Բնակելի հասարակական արտադրական, Էներգետիկ, հիդրոտեխնիկական,*

Շինարարության տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությանից պահանջվող լիցենզիաները՝ ըստ ,Քաղաքաշինության Շինարարության տեխնիկական հսկողության իրական ացումը հետևյալ ոլորտների՝

Հ/Հ	*Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).*
1	*2*
1	*Բնակելի հասարակական արտադրական, Էներգետիկ, հիդրոտեխնիկական,*

Աշխատանքների կատարման օրացույցային գրաֆիկ

№ n/n	*Անվանումը*	*Նախապատրաստական աշխատանքներ 10-օր*	*Առջին ամիս*	*Երկրորդ ամիս*	*Երրորդ ամիս*	*Չորրորդ ամիս*	*Հինգերորդ ամիս*	*Վեցերորդ ամիս*
Ա	*Բարեկարգման և կառուցման աշխատանքներ*							
1	*Նախապատրաստական աշխատանքներ*							
2	*Քանդման աշխատանքներ*							
3	*Ուղղաձիգ պլանավորում*							
4	*Եզրաքարերի բետոնե հիմքերի կառուցում*							
5	*Ավազանի ամրացման աշխատանքներ*							
6	*Բետոնե և բազալտե եզրաքարերի տեղադրում*							
7	*Հատակի ծածկույթների իրականացում (ճանապարհներ, բակ, ճեմուղիներ, ճանապարհ)*							
8	*Կանաչապատման աշխատանքների իրականացում*							
9	*Փայտե նստարանների տեղադրում*							
10	*Աղբամանների տեղադրում*							
11	*Էլեկտրոմոնտաժային աշխատանքներ*							
12	*Թեքահարթակների կառուցում,*							
13	*Ինժեներական ցանցերի կառուցում*							
14	*Աշխատանքի հանձնում*							

- *Ըստ ժամանակացույցի շինարարության տևողությունը ընդունվում է վեց ամիս:*
- *Շահագրգիռ կողմերի փոխադարձ համաձայնությամբ շինարարության տևողությունը կարող է փոխվել:*

Կազմեց՝ *Ն. Թովմասյան*

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԾԱԳՐԵՐԻ ՑԱՆԿ

ԹԵՐԹ	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԾԱՆՈԹՈՒԹ
1	Աշխատանքային գծագրերի ցանկ, բացատրագիր	Ը-1
2	Գլխավոր հատակագիծ Մ 1:1000	ԳՀ - 1
3	Իրադրության հատակագիծ (գեոդեզիական հանույթ) Մ 1:500	ԳՀ - 2
4	Գլխավոր հատակագիծ Մ 1:500 (բարեկարգում)	ԳՀ - 3
5	Գլխավոր հատակագիծ Մ 1:250 (չափագրում)	ԳՀ - 4
7	Ծածկույթի հատույթներ աշխատանքային ծավալներ	ՃՇ - 1
8	Աշխատանքների ծավալներ, հենապատի նյութերի մասնագիր , կտրվածք	ՃՇ - 2
9	Մետաղական ցանկապատի կոնստրուկցիա նյութերի մասնագիր	ՃՇ - 3
10	Մետաղական դռնակի կոնստրուկցիա նյութերի մասնագիր	ՃՇ - 4
11	Մետաղական դարպասի կոնստրուկցիա նյութերի մասնագիր	ՃՇ - 5
